ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻՆ
ԵՎ ՄԵԾՈՓԱՎԱՆՔԻ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

Ա. Ս. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Մեծոփա նշանավոր վանքը խոշոր դեր է կատարել հայ մշակույթի պատմության մեջ, մանավանդ XV դարի առաջին կեսում, Թովմա Մեծոփեցու բարունապետության շրջանում։ Վանքը գտնվում է Քաջբերունյաց գավառի հյուսիսային կողմում, Ծաղկոտն լեռների հարավային փեշերին, երկու կիրճերի միացման տեղում։ Նրանից հարավ ձգվում է ոչ բարձր լեռների մի շարք, որը վանքը բաժանում է Արճեշի դաշտից։ Ս. Աստվածածնի վանքի Մեծոփա մականունը բանասերներն ու տեղագիրները կապում են վանքի վերևում վաղեմի ժամանակներից կառուցված ջրամբարի՝ «ոփի» հետ, որ նշանակում է «փոս», և քանի որ փոսը մեծ է, կոչվել է «մեծ ոփ»։ «Մեծոփ կոչեցաւ, զի վերոյ մենաստանին ոփ մեծ՝ որ է փոս նախնեաց պարսպապատ շինեալ վասն ջուրց հավաքման»[1]։ Ըստ Խ. Լևոնյանի վանքը գտնվում է «խորունկ և լայնկեկ փոսի մը կենտրոնում», որից էլ Մեծոփ անունը[2]։ Քաջբերունյաց առաջնորդ տեր Աբրահամը 1291 թ. Հարություն գյուղի եկեղեցում թողած արձանագրության մեջ, ուրիշ այլ գյուղերի և կալվածքների շարքում, հիշում է նաև «զգեղն Մեծոփ»[3], որ վերադարձվել է Ասպիսնկա Ս. Աստվածածնի վանքին, որպես «սեփական աւանդսն, որ կարգեալ էլ յառաջնոցն, նախքան զաւէրն ի Խորասմէն»[4]։ Այդ ժամանակներին են վերագրում նաև Ս. Աստվածածին վանքի կառուցումը։ Ղ. Փիրղալեմյանը Մեծոփա վանքի հիմնադիր է համարում Աստվածատուր վարդապետ Արճիշեցուն. «Թվին ՈԾ (1201) Մեռելյարոյց Աստուածատուր վարդապետն Արճիշեցի շինէ սուրբ Աստուածածին եկեղեցին... Մեծոփայ և ապա վախճանեալ թաղի ի նոյն մենաստանն»[5]։ Այս տեղեկությունը քաղված է Աստվածատուր վարդապետի վարքից[6], որից, սակայն, երևում է, որ նա ոչ թե շինել, այլ վերաշինել է վանքը, որ այն կար 1201 թ. առաջ։ Ահա այդ հատվածը. «Այս երջանիկ և երևելի վարդապետս Աստուածատուր էր ի գաւա-

---

1 Ն. Սարգիսյան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 268։

2 «Բյուզանդիոն», Կ. Պոլիս, 1900, № 1196։

3 Ն. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 268։ Հետագայում, մինչև 1895 թ. Քրթագյուղը մի քանի այլ գյուղերի հետ հարկատու է դառնում Մեծոփա վանքին։

4 Նույն տեղում, էջ 268։ Խոսքը Խորեզմշահ Ջալալեդդինի 1225—1230 թթ. Հայաստանում կատարած ավերածությունների մասին է։ Հատկապես 1228—1230 թթ. Ջալալեդդինի ու Իկոնիայի սուլթանի և այլոց զորքերի ռազմաբեմն էր Խլաթի շրջանը (տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Գ, Երևան, 1952, էջ 192)։

5 Գ. քհ. Աղանյան, Դիվան հայոց պատմութեան, գիրք Ժ, Թիֆլիս, 1912, սյուն 492—493։

6 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 4517, Յայսմաւուրք, էջ 370ա—371բ. «Մեհեկի Ե և փետրուարի ԺԱ։ Յայսմ աւուր յիշատակ է աստուածաբան վարդապետին եկեղեցոյ Աստուածատրոյ Մեծոփայվանից սուրբ ուխտին Քաջբերունոյ»։ Հայսմաւուրքներից բացի տե՛ս նաև № 1669 ձեռագիր ժողովածուի էջ 35բ—42ա։

ոէն Քաջբերունեաց յաստուածապահ և յանեղաշէն քաղաքէն Արճիշոյ, որդի պոլով մեծատան Աղբերիկ կոչեցեալ, որ և ետուն զորդիս իւրեանց յուսումն սրբութեան աստուածաշունչ դրոցն գիտութեան, ի ճգնաւոր և ի պահացող ոմն կրաւնաւոր ազգական իւրեանց ի սուրբ ուխտն Աստուածածին։ Եւ սնոյց զնա ամենայն առաքինութեամբ և մաքուր վարուք կալ ի մարմնի իբրև զհրեշտակ աստուծոյ, որ և արժանի եղև քահանայական շնորհի»։ Վերը հիշված Աստվածածին ուխտը Մեծոփա վանքն է, ուր Աստվածատուրը ստանում է իր նախնական կրթությունը և արժանանում քահանայության աստիճանի։ Այնուհետև Աստվածատուրը «հասեալ ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի, վարժեցաւ ի հրահանգս կրթութեան իմաստասիրութեան, ուսման աւետարանին քարոզութեան, ընկալաւ վարդապետական իշխանութիւն ի վարժապետաց այնմ ժամանակին ի շնորհաց հոգոյն։ Եւ ի մեռանել ծնողացն յերթեալ յԱրճէշ քաղաքի, առեալ զստացուածս ծնողաց իւրոց, բաժանեալ ցրուեցաւ և ետ ողորմութիւն աղքատաց և տնանկաց։ Զի ունէին կուղպակ բազումս, և զաւելորդն առեալ շինեաց զսուրբ զեկեղեցի Աստուածածնի կուսին, յամի ՉՃԾ (1201) թուականութեան մերս տումարի»[7]։

Ինչպես երևում է վերոբերյալից, Աստվածատուր քահանան երեսուն երեք տարեկան հասակում ձեռնամուխ է լինում վարդապետական կրթության և հավանաբար 7—8 տարի անց «ի վարժապետաց այնմ ժամանակի» վարդապետական գավազան է ստանում։ Ծնողների մահից հետո կառուցում (վերակառուցում) է Մեծոփա Ս. Աստվածածնի եկեղեցին։ Այս նշանակում է, որ վանքը գոյություն ուներ դեռևս XII դարի կեսերին, որի միաբաններից էր Աստվածատուրի առաջին ուսուցիչը։

Աստվածատուրը Մեծոփա ուխտը հանձնում է Թովմա ճգնավորին։ Նրա «իմաստուն և գիտնական» մակդիրները ցույց են տալիս, որ այստեղ ուսումնական կյանք կար։ Այն ծաղկում է XIII դարի վերջին և XIV դարի սկզբին, նշանավոր մատենագիր և ուսուցիչ Մխիթար Սասնեցու, իր ուսումնակից Հովհաննես Ոսպնակեր Արճիշեցու և նրանց աշակերտների օրոք։ Դարը փակում է Հովհաննես Մեծոփեցին՝ իր դպրոցով և նա էլ սկսում է հաջորդ դարը՝ Մեծոփա վանքի վերաշինությամբ։ Վանքի արևմտյան որմին փորագրված արձանագրությունից իմանում ենք, որ «թուին ՊԾԸ (1409) ես Յովհաննէս վարդապետս, վերջինս եկեղեցւոյ և առաջնորդ աստուածաբնակ սուրբ ուխտիս Մեծոփայ, միաբանութեամբ ամենայն եղբարցս ապաստան եղեալ ի նոյն, որ զորացոյց զտկարս, ձեռն ի գործ արկեալ շինեցաք զսուրբ տաճարս Մարիամայ Աստուածածնին, յիշատակ հոգւոյ իմոյ մեղապարտի և ծնողացս կրկնակի, և որք մասն ինչ տրոց նուիրեալ են ի սուրբ եկեղեցիս։ Արդ երես անկեալ պաղատիմ մանկանցդ սուրբ Սիովնի՝ որք ընծայէք զսուրբ հացն կենաց յիշեսջիք զմեզ առաջի անմահ գառին Յիսուսի Քրիստոսի, զի և ձեզ յիշողացդ, և մեզ յուսացողացս, և համօրէն միաբանիցս առհասարակ աշխատաւորացս ողորմեսցի Քրիստոս աստուած, ի կաթողիկոսութեան տէր Յակոբի, ի վարդապետութեան քաջ հռետորին Գրիգորի Տաթեւացոյն, յորմէ ազատեցաք ի կապանաց և անիծիցն Աղթամարայ։ Ի բռնակալութեան Լանկ Թամուրին հիմ-

7 Նույն տեղում, էջ 570ա, 570բ։ Հմմտ. Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 183—184։

նարեկեցաւ և ի պարոնութեան (Ղարա Ուսուֆին)[8] աւարտեցաւ ձեռամբ ուստայ Ցարաճին, Ատոմին, Սիրունին, Դաւթին, Տիրատրուն, Մկրտչին, Յովհաննէսին, Յովսէփին, Ղազարին, Ատոմին, Մարտիրոսին, Զաքարբէկին, Կիրակոսին և այլ ամենայն աշակերտաց նոցին»[9]։

Եկեղեցու կամարների մեջ, Հովհաննես Մեծոփեցու խորհրդով, վարպետները գաղտնի դարաններ էին կառուցել, որոնց մեջ պահվում էին ձեռագրեր[10]։

Այս վերակառուցումից հետո սկսվում է Մեծոփա վանքի մշակութային գործունեության ամենաբեղմնավոր շրջանը։ Այդ ժամանակներից այնտեղ էր նստում նաև Քաջբերունիքի կամ Արճեշ գավառի առաջնորդ եպիսկոպոսը, որը միևնույն ժամանակ Մեծոփա վանքի վանահայրն էր[11]։

Վերաշինված վանքի նավակատիկը համընկնում է Գրիգոր Տաթևացու Մեծոփա վանք գալուն։ «Եւ ի հալածմանէ անօրինաց շարժեցաւ ի գաւառէն Սիւնեաց առեալ զմեզ՝ եկն ի գաւառն Արճիշոյ։ Եւ արարեալ իւր բնակութիւն զաստուածահաճոյ ուխտն Մեծոփայ առ... վարդապետն Յովհաննէս և յոյժ ուրախացաւ, վասն զի ի նոյն ամին ՊԾԸ (1409) աւարտեալ էր զնորաշէն տաճարն սուրբ Աստուածածնին»[12],— գրում է Թովմա Մեծոփեցին իր Պատմության մեջ։ Սարգիս Մեծոփեցին, Քաջբերունիքից Տաթև ուսանելու գնացած տասներկու աշակերտներից կրտսերագույնը, այլ կերպ է մեկնում Տաթևացու Քաջբերունիք գալը. «Եւ յազդմանէ հոգւոյն սրբոյ վասն իւիք ինչ պատճառի եկն մեծ վարդապետն և երկրորդ լուսավորիչն յերկիրս Քաջբերունի, ի սուրբ վանս Մեծոփայ»[13]։ Այն ժամանակ այդպես էր գրում նաև Թովմա Մեծոփեցին. «Շարժեալ ի հոգոյն ազդմանէ, եկեալ բնակեցաւ յերկիրս Քաջբերունւոյ, ի Սուրբ ուխտս Մեծոփայ»[14]։ Ուրեմն Տաթևացու Քաջբերունիք գալու պատճառը միայն «ի հալածմանէ անօրինաց» մեջ չպետք է փնտրել, ոչ էլ համաձայնել Օրմանյանի կարծիքին, ըստ որի Թովմա Մեծոփեցին «իրեն գրավեց եռամեծ Տաթևացին ու զայն Վասպուրական բերավ»[15], այլ նաև, ինչպես հենց ինքը

---

8 Ըստ Թովմա Մեծոփեցու, վանքի վերակառուցումը նույնպես սկսվել է 1402 թ. և ավարտվել Ղարա-Յուսուֆի իշխանության ժամանակ, հետևաբար «ի պարոնութեան» բառից հետո պետք է գրվեր Ղարա-Յուսուֆի անունը, ուր և գրել է հրատարակիչը։

9 Ղ. Փիրզալեմյան։ Նոտարք հայոց, Կ. Պոլիս, էջ 30։

10 Ն. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 267։ Հեղինակը ցավով նշում է, որ գրչագրերը թալանվել են քրդերի կողմից և մնացել են միայն մի ճառընտիր և մի Սարգիս գիրք։

11 XV դարից հետո վանքը հաճախակի ենթարկվում է ավարի և ավերի. բայց միաբանները ջանում են հավատարիմ մնալ Մեծոփա վանքի լավագույն ավանդներին և շարունակում էին ձեռագրեր ընդօրինակել, նորոգել, պահպանել վանքի մատենադարանում ունեցածը և հարստացնել այն։ Այդպես շարունակվում է մինչև XX դարի սկիզբը, մեծ եղեռնի տարին։ Մինչև այդ, 1895 թ. թալանի է ենթարկվում վանքը։ Միաբանները տեսնելով, որ այլևս ապահովություն չկա երկրում, Հովհաննես Ոսպնակերին վերագրվող «Մեռելայարոյց հրաշակերտ աւետարանը» տեղափոխում են Լիմ կղզի, իսկ «վանքի մնացած 100 կտորե ավելի գրչագրերը 1915 թվականի ապրիլին Քաջբերունյաց գավառի կոտորածին մնաց քյուրտերու ձեռքը և այդ ձևով ալ կորստյան մատնվեցան», հոգևորականներից շատերը «կոտորածներու ընթացքին չարաչար տանջանքներով սպանվեցան»,—գրում է ականատես վարդապետ Հյուսյանը (տե՛ս Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակներ, № 92, էջ 19)։

12 Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն, Փարիզ, 1860, էջ 51—52։

13 Մատենադարան, ձեռ. № 921, էջ 367բ։

14 Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Երևան, էջ 55, 101 (այսուհետև՝ Հիշատակարաններ)։

15 Մ. Օրմանյան, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, էջ 2134։

Գրիգոր Տաթևացին է գրում. «յազդմանէ հոգւոյն եկաք ի կողմանս Վասպուրական ծովու»[16]։ Որո՞նք են այդ պատճառները։ Սկսենք մի փոքր հեռվից։ XIV դարի առաջին կեսին դադարել էր Գլաձորի համալսարանի և նվազել նրա հաջորդ Հերմոնի դպրոցի գործունեությունը, Հովհաննես Որոտնեցու Տաթևի դպրոցը մնացել էր միայնակ՝ կաթոլիկ եկեղեցու գործակալների ու միարարական շարժման կողմնակիցների աշխուժացման պայմաններում։ Մաղաքիա Ղրիմեցին միարարների դեմ պայքարելու համար, օգտագործելով իր մեծատուն հոր ունեցվածքը, Սյունիքում «շինեաց Բ վանս և կարգեաց Բ դպրատունս... որոց առաջնորդ էր... մեծ հռետորն և բանիբուն իմաստունն վարդապետաց վարդապետն Կախիկ... նաև մեծ բաբունապետն Սարգիս... Զայս Բ վարդապետքս կարգեաց Մաղաքիայն յր տեղիս, առ ի յընթեռնում և յուսուցանել։ Եւ ինքն կայր սոցա ի ծառայութիւն և ի պատրաստիլ զպիտոյս կարեաց։ Եւ այսպիսի վարուք կացեալ ամս ԺԵ (15) և ի թուականն մերում ՊԼԳ (1384) ամին դեղակուր եղև ի սանամօրէ իւրմէ՝ բանիւ երկաբնակ աղթարմա առաջնորդացն»[17]։ Նշանակում է Մաղաքիա Ղրիմեցին Ապրակունիսի դպրոցը հիմնադրել է 1369 թ., իսկ Աստապատինը՝ նրանից հետո։ Այս դպրոցներում բազմաթիվ աշակերտներ էին ուսուցանում, վարդապետներ պատրաստում և պայքարում միարարների դեմ։ Պայքարը գլխավորում էր Հովհաննես Որոտնեցին, իսկ նյութական կողմն ապահովում էր Մաղաքիա Ղրիմեցին։ 1384 թ. թունավորվում է Մաղաքիան։ Թշնամուց հալածված, երկու տարի աշակերտներով լեռներում թափառելուց հետո, Որոտնեցին ապաստանում է Երնջակի Ապրակունյաց վանքում և այնտեղ 1386 թ. կնքում իր մահկանացուն։ Նրան փոխարինում է Գրիգոր Տաթևացին։ Սկսվում են Լենկ-Թեմուրի ավերիչ արշավանքները։ Սարգիս վարդապետը, որ այս թվականներին Աստապատում էր, ավելի ապահով տեղ և օժանդակություն գտնելու համար գնում է Խոյ, ապա Քաջբերունիք և հաստատվում Խառաբաստա վանքում։ Իսկ Գրիգոր Տաթևացին, նրանից որոշ ժամանակ անց, տեղափոխվում է Տաթև և շուրջ քսան տարի «ի դառնախաւար ժամանակիս, իբրև զարեգակ ի միջօրէի պայծառացեալ լուսաւորէ զեկեղեցի... լնու զկարօտութիւն բազմութեան եղբարցս... այլև զբոլոր ազգիս, միշտ գնալով ի մեջ այլազգեաց մեծամեծաց և փոքունց, զի ոչ գոյր իշխան և առաջնորդ, բաց ի սմանէ... շրջելով ի հինս և ի նորս, այլ և յարտաքին պիտութիւնս և ժողովելով զօգտակարն՝ կազմէ պսակս լուսաւորս ի գլուխս մանկանց եկեղեցոյ և վահան ամրութեան ընդդէմ այլադաւան տոհմի»[18],— գրում է Թովմա Մեծոփեցին։ Բայց արդեն քայքայվում էր Տաթևացու դպրոցը։ Լենկ-Թեմուրի թոռ Աբուբաքրի և Կարա-Յուսուֆի պատերազմները արյունաքամ էին արել Վասպուրականը և Սյունիքը։ Պատերազմական տառապանքներին ավելացել էր նաև բնական աղետը՝ Սյունիքի երկրաշարժը, երբ «ամ մի ի լման երկիրս շարժեալ... կարծր բնութիւնք վիմաց պատառեցան և բազում դիակունք մեռեալ գտան», Սյունիքի իշխան Սմբատի որդիք և եղբայրը՝ «պարոն Բուրթէլ՝ հանդերձ որդովք իւրովք՝ հանգեաւ ի Քրիստոս»[19]։ Մեծ դպրոց պահելը դժվարանում էր։ Մինչև Քաջբերունիք գալը Տաթևացին արդեն պակասեցրել էր աշակերտների թիվը, և ուղարկել իրենց գավառները, «անտի քայքայեալ

16 Վենետիկ, ձեռ. № 1091, էջ 434։
17 Մատենադարան, ձեռ. № 4517, էջ 101ա։
18 Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, ԺԵ դ., Ա, էջ 74։
19 Նույն տեղում, էջ 80։

ցրուեցաք և եկեալ երկիրս Քաջբերունոյ... ի վանքս, որ կոչի Խառաբաստա»[20], —գրում է Սարդիս Մեծոփեցին։ Ահա այդ ժամանակ միայն, իր աշակերտ Սարգսի և այլոց Քաջբերունիք գալուց որոշ ժամանակ անց, Տաթևացին, աշակերտների մի մասի հետ, գալիս է Մեծոփա վանք։

Մինչ այդ 1401 թ. արդեն մահացել էր Խառաբաստի դպրոցի Սարգիս րաբունապետը։ 1406 թ. նրան փոխարինող Վարդան Հոգոցվանեցին աշակերտներով Քաջբերունիքից փախել էր Վանի Սալնապատի վանք և այնտեղ մահացել։ Նրան հաջորդող Գրիգոր Խլաթեցի րաբունապետին չի հաջողվում Ցիպնավանքում վերականգնել քայքայված դպրոցը։ Աշակերտներից տասներկուսը գնում են Տաթև, Գրիգոր Տաթևացու մոտ, իսկ Սարդիս վարդապետի դպրոցը, որ ստեղծվել էր Մաղաքիա Ղրիմեցու ջանքերով և հարատևել շուրջ քառասուն տարի, դադարում է գոյություն ունենալուց։ Տաթևի դպրոցը կորցնում է իր երկվորյակին, իսկ հայ ժողովուրդը՝ լենկթեմուրյան ավերիչ արշավանքներից հետո՝ իր դպրոցներից մեկը, որն այնքան անհրաժեշտ էր դավանափոխության դեմ պայքարելու և վարդապետներ ու գրիչներ պատրաստելու համար։ «Վասն մեղաց մերոց բարձան ճոխութիւնքն մեր և փառք, այսինքն աստուածունակ անձինքն... բաբունիք բարիք Սարդիս և Վարդան ամոլքն հաւատոյ, վասն որոյ եմք որպէս զմարմին մեկնեալ ի հոգւոյ, և տապիմք աներկեան նեղութեամբ թառանչ թախծանաւք, որպէս զագռաւ ունայն ի տանիս, և ոչ ուստէքէ մխիթարութիւն»,— գրում է Հովհաննես վարդապետը Տաթևի իր ուսումնակիցներին[21]։

1408 թ. երկրորդ կեսին Գրիգոր Տաթևացին գալիս է «երկիրս Քաջբերունի, և ձմերեալ ի հրեշտակաբնակ վանքս Մեծոփայ»[22]։ Տաթևացու Քաջբերունիք գալու նպատակը Խառաբաստավանքի քայքայված դպրոցի վերականգնումն էր։ Այդ բանը նրան հաջողվեց, բայց Մեծոփա նորաշեն վանքում, որտեղ իր դասախոսություններով հիմք դրեց Մեծոփա վանքի հայտնի դպրոցին, որը դարձավ Տաթևի և Խառաբաստա դպրոցների ժառանգորդը։ «Եւ ժողովեցան առ նա բազումք ի վարդապետացն. Գրիգոր նահատակն և սուրբ այրն Խլաթեցի, Յակոբ Ովսաննացի ի Ռշտունեաց, Մարգարէն ի Վարագայ, Յակոբ ի յԱսպիսնկա, Յովհաննէս ի Փափլինոյ, Ստեփաննոս ի Բերկրոյ, Մկրտիչն ի Հիզանայ, Յովհաննէսն ի Բաղիշոյ, Սարգիս վարդապետն ի Յարութենէն, Մելիքսէթն ի յՍրզնկա և ի քահանայից և աշակերտաց աւելի քան ութսուն աբեղայ եւ պայծառացեալ լուսաւորեաց աստուածային վարդապետութեամբ զամենեսին, Իբրև փրկիչն մեր Յիսուս...»[23]։ Իսկ Հովհաննես վարդապետ Մեծոփեցին բոլորի ուրախությունն արտահայտելով ասում էր. «Տէր Յիսուս, ես զՄայր քոյ պատուեցի, դու զիս՝ պատուեցեր վարդապետօք և հոգևոր հարբք իմոք և գրոց աշակերտօք և գրագրօք և ճգնաւորօք և ճշմարիտ ուսումնականօք և ի նաւակատիս տաճարի մոր քոյ առաքեցեր զնոսա»[24]։ Նա «զամ մի լման մխիթարեաց զամենայն եղբարսն անճառելի ցնծութեամբ եւ զերիս գիրս մեկնեաց դասիւ...»[25]։ Իսկ Գրիգոր Տաթևացին հաստատում է. «Եւ ընթերցմամբ հավաքե-

20 Նույն տեղում, էջ 93։
21 Վենետիկ, ձեռ. № 1091, էջ 417։
22 Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, ԺԵ դ., Ա, էջ 96։
23 Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն, էջ 52, 59։
24 Նույն տեղում, էջ 59։
25 Նույն տեղում, էջ 52։

ցի զդժուարալոյծ բանս Յոբայ և զՄեկնչաց նորա, և սակաւ ինչ լուծումն Առիստակիսի և Գէորգեայ ի խրատս գրչութեան, ընդ նմին և զքաղուածոյ մեկնութեան Յովհաննու աւետարանչի, և ընծայեցի ի պատիւ սուրբ տեղոյս ուսումնասէր անձանց՝ ուղղադաւան մտաց, և ի գլուխս բաժանելով վասն մտաւոր տեսութեան և ի զարդ ուսման, ի պէտս բեմբասացութեան և ի խրատս զրուցատրութեան»[26]։

Գրիգոր Տաթևացին «ուսումնասէր անձանց ուղղադաւան մտաց» համար վարդապետական ծրագիր էր տվել, մասնավորապես շեշտելով գրչության արվեստի բնագավառը։ Գրչության արվեստը բոլոր տիպի դպրոցների անկապտելի առարկան էր։ Այն շատ լավ էին անցնում նաև Տաթևի դպրոցում։ Բայց ահա այստեղ, Մեծոփա վանքի դպրոցում, գրչությանը ավելի շատ ուշադրություն պետք է դարձնեին, քան եղել է որևէ այլ դպրոցում։ Պատճառն այն էր, որ լենկթեմուրյան արշավանքների ընթացքում ձեռագրական հսկայական կորուստներ էին եղել[27], հարկավոր էր, որ բազմացվեին մնացած երկերը և փրկվեին կորստից։ Հովհաննես Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու և նրանց աշակերտների կողմից շատ նոր գործեր էին ստեղծվել ընդդեմ միարարների։ Գ. Խլաթեցու խմբագրությամբ պատրաստ էին Յայսմաւուրքը և Գանձարանը։ Բացի այդ, նախորդ երկու դարերում գրչության արվեստի ծաղկման հետ այդ բնագավառ էին թափանցել գրիչներ, որոնք չէին տիրապետում այդ արվեստի նրբություններին և աղավաղում էին ձեռագրերը։ Ձեռագրական հսկայական ժառանգությունը ժամանակին ծառայեցնելու և ապագային օրինավոր կերպով փոխանցելու համար անհրաժեշտ էին գրագետ գրիչներ, և այդ խնդիրը լուծելու էր Մեծոփավանքի դպրոցը։ Այս պատճառով էլ «դժուարալոյծ բանս Յորա» մեկնելուց հետո Գրիգոր Տաթևացին «բացայայտեաց զգիրս գրչութեան Առիստակիսի և Մեծին Գէորգեայ»[28],—գրում է Թովմա Մեծոփեցին, որոնցում շարադրված էին գրչության արվեստի քերականական-տեսական սկզբունքները։

Սակայն մի տարի անց Տաթևացին թողնում է Մեծոփա վանքը. «Եկեալ սիրելի աշակերտք նորա գողացան զնա ի գիշերի... եւ մեք ելեալ գնացաք զկնի նորա, հանդերձ վարդապետաւք և եպիսկոպոսաւք, և գրոց աշակերտաւք, և հասաք նմա յերկիրն Այրարատեան, լալով, ողբալով, արտասուաւք, աղիողորմ կսկծանօք և ոչ կարացաք դարձուցանել գնա։ Եւ անդ (Երևանում—Ա. Մ.), մեզ ետ հրաման վարդապետութեան»[29]—շարունակում է Մեծոփեցին։

1409 թ. Գրիգոր Տաթևացին Մեծոփա վանքից գնալուց հետո դպրոցի բարունապետ է դառնում Գրիգոր Խլաթեցին, Գրիգոր Տաթևացու դասընկերը և

---

26 Մատենադարան, ձեռ. № 1115, էջ 123բ։

27 Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, Ա, էջ 11, 12։

28 Լ. Խաչիկյան. Հիշատակարաններ, ԺԵ դ., Ա, էջ 101։ Տե՛ս Լ. Գ. Խաչերյան, Գրչության արվեստի լեզվա-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1962, էջ 221—321։ Մատենադարան, ձեռ. № 1775, էջ 196ա, ձեռ. № 115, էջ 203բ։

29 Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, ԺԵ դ., Ա, էջ 101։ Մինչ այս, մի անդամ էլ, Գրիգոր Տաթևացուն փետրվար ամսին են կամեցել տանել. «Ի մեհեկի ԺԵ (փետրվարի 21) զմեծ բարունապետն ի սուրբ ուխտէ Մեծոփա կուտանէին ի Տաթև, և մեծ տրտմութիւն եհաս մեծի և փոքու, այլ ողորմութիւն աստուծոյ եհաս յօգնութիւն, Յոհանէս վարդապետն եբեր զրերթաւագն և զքրիստոնեայ տանուտեարքն ամենայն և արգելեց, և եղև ուրախութիւն մեծ վարդապետաց և աշակերտաց ամենեցուն»—գրում է Մկրտիչ Մեծոփեցին (Հիշատակարաններ, ԺԵ դ., Ա, էջ 94)։

նշանավոր գրիչը, Խառաբաստի դպրոցի վերջին ռաբունապետը, որը պետք է ապահովեր վարդապետական դպրոցի գրչության արվեստի հիմնավոր ուսուցումը։ Այդ ժամանակ այդտեղ դասախոսելու է հրավիրվում նաև նշանավոր տոմարագետ Հակոբ Ղրիմեցին։

Իսկ «սքանչելի այրն Աստուծոյ Յովհաննէս վարդապետն մնաց և գաւառն Արարատեան»[3], իր հետի աշակերտներով, որոնց մեջ էր նաև Թ. Մեծոփեցին։ Այդ առթիվ Գրիգոր Խլաթեցին մի նամակ է ուղարկում Արարատյան գավառ՝ Թովմա Մեծոփեցուն։ Նամակը օգնում է մեզ որոշ հարցեր լուսաբանել։ «Նուաստ Գրիգոր խնդրողս բանի... մատուցանեմ ողջոյն համբուրի... Եւ ընդ ողջունիս հարցումն աստուածախնամ կեանս, զորպէս և զիարդն, և տամք փառս տուաւղին փառաց, որ հասոյց զձեզ այդմ փառաց և աստիճանաց։ Վասնորոյ հզոր ընդ մի գոհութիւն աստուծոյ և ձեզ երկար կենդանութիւն։

Այսուհետև առ իս դարձիր, ի տուն քո և առ եղբարս քո։ Տես ի տագնապ ճանապարհիս և խնայեա ի սոսա։ Գիտես թէ որքան նեղացեալ է եղբայրդ քո Յոհաննէս էրէցդ ի ճանապարհիդ ի քո դիմացդ։ Նոյնպէս և պարոն Յովհաննէս և Գորգի-Մելիքն և միաբան ամէն մեծէ ի փոքր։

Եւ թէ կու ջանաս զՅովհաննէս վարդապետդ ի հետ բերես, ապա թէ չէ ի գալ, դու եկ ի տուն քո, առ ընտանիս քո։ Եւ թէ դորա սրտին աւֆայ կու պահէս, ուխջէպ կառնէս, դու առ մեզ արեկ, մեր աչացս լոյս ես և սրտի սուն։ Ի Տէր Յուսկայն որդոյ վանացն մինչ ի Սքանչելագործն քո է։ Ես էնց կու կամիմ աստուծով զքեզ առ իս, զինչ զլոյս աչացս, և զլուր ականջացս, զհոտ ըռնկացս և զճաշակ բերանոյս, զբարբառ լեզուոյս, և զշարժումն ձեռացս, զքայլս ոտիցս, և զառողջութիւն մարմնոյս, զմաքրութիւն հոգւոյս, և զսրբութիւն մտացս։ Աստուած է վկայ ասացելոցս, որ էնց կարաւտ եմ քո սրբութեանդ, և կամիմ որ զմնացեալ աւուրքս ի քո շուքն անցուցանեմ, և զհողս հողոյն քո ձեռօքդ տաս։

Ողջ լեր աստուծով։

Թուղթս գնա յԱրարատեան գաւառն»[31]։

Այս անկեղծ նամակը ցույց է տալիս, որ Գրիգոր Խլաթեցին եղել է Մեծոփավանից նորաբաց դպրոցի ռաբունապետ, որոշակի իրավունքներով և իշխանությամբ, այլապես չէր կարող գրել «առ իս դարձիր» և ոչ էլ կարող էր ուրիշի իրավունքներն ու իշխանությունը, որոնք տարածվում էին Արծկեի Սքանչելագործ վանքից մինչև Արգելանի Տեր Հուսկան որդու վանքը, Թովմա Մեծոփեցուն տալ։ Ուրեմն իրավացի չէ Ա. Մովսիսյանը, երբ գրում է. «Մեծոփեցին Տա-

30 Մատենադարան, ձեռ. № 2065, էջ 391ա։ Սյունյաց եպիսկոպոս Առաքելը՝ Տաթևացու քրոջ որդին, աշակերտներով նրան Երևանից հոկտեմբերի 21-ին տանում է Տաթև. «Հետ բաժանելոյն մեր ի նմանէ ԼԶ (36) օրս»,—գրում է Թ. Մեծոփեցին, այսինքն դեկտեմբերի 27-ին, Տաթեվացին վախճանվում է։ Թ. Մեծոփեցին մեծ բարեբախտություն էր համարում Գրիգոր Տաթևացու գոյությունը «ազգիս Հայոց, զի զնա ունեաք հոգևոր և մարմնաւոր թագաւոր աստուածապարտ պարգև, և զնա երարձ ի մեզանէ»։ Մինչ այդ, ինչպես գրում է Թ. Մեծոփեցին,— Գրիգոր Տաթեվացին, «մտանելով յերկիրն պարգևաց, այսինքն արձակեաց զմեզ ի բանագրութենէ անիծից սուտ և ապստամբ կաթողիկոսացն Աղթամարայ, և երեր ազգիս Հայոց զփրկական համբաւն և առաջնորդեաց արժանաւորացն մտանել ի միաբանութիւն և ի հնազանդութիւն գերապրակաև և սուրբ աթոռոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ» (Մատենադարան, ձեռ. № 2065, էջ 391ա. հմմտ. Հիշատակարաններ, ԺԵ գ., Ա, էջ 105)։

31 Վենետիկ, ձեռ. № 1091, էջ 397—398։

թևացու հրամանով նշանակվում է Մեծոփա դպրոցի վերատեսուչ և դասատու»[32], հենվելով Տաթևացու արձիշեցիներին գրած թղթի վրա, ուր Մեծոփեցու մասին ասված է. «ետու դմա հրաման և իշխանութիւն դաս ասել, աշակերտ կարգել»։ Այսպիսի հրաման տալիս էին վարդապետ ձեռնադրված աշակերտներից շատերին։ Իսկ հիշյալ թղթում բոլորովին ակնարկ չկա Թովմային Մեծոփա վանքի տեսուչ նշանակելու մասին։ Մեծոփա վանքում այդ ժամանակ, այսինքն 1410 թ. ընդօրինակված մի ժողովածուի գրիչ հիշում է «զհոգևոր հայրն մեր և ղծնաւղ զմեծ ռաբունապետն Գրիգորիոս, որդի Ծերին»[33], որը Խլաթեցին է։

Թովմա Մեծոփեցին գրում է, թե Արարատյան գավառ գնալուց առաջ «մեծ վարդապետն Գրիգոր օրհնեաց զաշխարհս մեր»[34]։ Այս նշանակում է, որ Տաթևացուն «գողանալը» այնքան էլ հապճեպ չի եղել, այնպես որ նա օրհնել է Քաջբերունիքը, և, հավանաբար, Գրիգոր Խլաթեցուն ինքը կարգել ռաբունապետ։ Այս բանից չէ՞ արդյոք, որ դժգոհել է Հովհաննես Մեծոփեցին։ Այլապես ինչո՞ւ նա Տաթևացու՝ Երևանից մեկնելուց հետո, մոտ վեց ամիս մնաց այնտեղ։ կամ ի՞նչ են նշանակում Խլաթեցու՝ Թովմա վարդապետին գրած նամակի հետևյալ տողերը. «Թէ կու ջանաս զՅովհաննէս վարդապետդ ի հետ բերես, ապա թէ չէ ի գալ, դու եկ ի տուն քո»։ Հովհաննես վարդապետը ետ չեկավ։ Նա գնաց Այրիվանք «երկիր պագանել աստուածամուխ գեղարդեան... Ամենափրկչին... և անդ երկիր պագեալ հասեալ կենաց նորա»[35]։ Մահը տեղի է ունենում 1410 թ. մայիս ամսին։ «Եւ մեք աշակերտք գոլով նմա և հոգևոր որդիք, Մկրտիչ, Թովմա և նահատակն մեծ վարդապետն Ռշտունեաց Յակոբ և վարդապետն Մկրտիչ ի Բերկրոյ, ժողովեցաք և բազում եղբարս, և եղաք զնա... ի մեծահանդէս ուխտն Հայոց թառ»[36]։

1410 թ. ամռան սկզբներին Թովմա Մեծոփեցին վերադառնում է Քաջբերունիք և ստանձնում Մեծոփավանից դպրոցի ռաբունապետությունը (որը նրան սիրով զիջում է Գրիգոր Խլաթեցին) և այն տանում է Գրիգոր Տաթևացու նշած ծրագրով։ Այդ է պատճառը, որ Կիրակոսը, ամփոփելով իր ուսուցիչ Թովմա Մեծոփեցու տեսչական և ուսուցչական գործունեությունը, գրում է. «Լե (35) ամ դաս ասելով ամենայն անձանց գրոց աշակերտելոց և բազում որդիս ի փառս ածեալ և է (7) աշակերտի գաւազան տուեալ... և ուսոյց ԻԴ (24) ընտիր գրագիր»[37]։

Այս աշակերտները, ընտիր գրագիրները Վասպուրականի տարբեր կենտրոններում հետագայում ուսուցչությամբ ու գրչությամբ էին զբաղվում։ Թովմա Մեծոփեցին աշակերտներ էր պատրաստում, հայ դպրոցների համար դասագրքեր ու ձեռնարկներ ստեղծում, օգնում էր հարևան դպրոցներին՝ իր սաների ու ստեղծած ձեռնարկների միջոցով։ Նա ձեռագրեր էր հավաքում, նորոգում, խմբագրում, լրացնում, հանձնարարում ընդօրինակության, փրկում էր անհետ

---

32 Ա. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 205։

33 Մ. Քեշիշյան, Յուցակ Զմմառի, № 227, էջ 542։

34 Թ. Մեծոփեցի, Պատմութիւն, էջ 60։

35 Նույն տեղում, էջ 61։

36 Նույն տեղում, Մ. Օրմանյանը թյուրիմացաբար կարծում է, թե այս վերաբերում է Գրիգոր Տաթևացու թաղմանը (Ազգապատում, էջ 2028)։

37 «Պատմութիւն մեծ ռաբունապետին Թումայի» (Գ. Հովսեփյան, Թովմա Մեծոփեցու կեանքը, Վաղարշապատ, 1914, էջ 8)։

կորստից։ Զբաղվում էր նաև մատենագրությամբ, իր ապրած ժամանակի անցուդարձը նկարագրող «Պատմությունից» բացի, նրա գրչին են պատկանում շուրջ երեք տասնյակ գործեր[38]։

Թովմա Մեծոփեցին, Գրիգոր Տաթևացու նման, որը հայոց ազգի համար դարձել էր, Թ. Մեծոփեցու իսկ արտահայտությամբ, «հոգևոր և մարմնավոր Բագաւոր աստուածապարգև», ինքը ևս հոգում էր տառապյալ ժողովրդի մասին. «Ընեղութիւն և զտրտմութիւն տառապեալ ազգիս արամեան տանս աբեթեան աշխատէր հանապազ ի թուղթ գրելն վասն աղքատաց և գերելոց, որ մին տարին Գ դաստա թուղթ վճարել էր ի նամակ գրելն»,— գրում է նրա վարքագիր Կիրակոս բանասերը։

Թովմա Մեբոփեցին, որպես հայ եկեղեցու և ժողովրդի սպասավոր, մի նամակում նախ օրհնում, ապա դիմում է ժողովրդին՝ ժողովրդի համար[39]։ Համազգային չարիքի պարագաներում հայ վարդապետը իր ուսերի վրա էր վերցրել նաև աշխարհիկ իշխանության որոշ իրավունքներ և առաջարկում էր ժողովրդի բոլոր խավերին՝ հոգևոր և աշխարհիկ, որ ոչ միայն իրենց ունեցածից սովորական ողորմություն և օգնություն տան աղքատներին և գերի ունեցող ընտանիքներին, այլև այդ նպատակների համար չխնայել նույնիսկ եկեղեցուն նախատեսած բաժինը, ինչ «խաչի է խոստացեալ կամ Երուսաղէմայ ճանապարհին, կամ եկեղեցւոյ»։

Նրա անմիջական նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ իրագործվեց ամենայն հայոց կաթողիկոսության վերահաստատումը Էջմիածնում 1441 թ., որը խոշոր համազգային նշանակություն ուներ և որի համար մտահոգված էր իր ուսուցիչ Գրիգոր Տաթևացին։

Թովմա Մեծոփեցու բաբունապետությամբ Մեծոփա դպրոցը եղավ Սարգիս վարդապետի և Գրիգոր Տաթևացու դպրոցների ավանդների շարունակողը։

---

38 Լ. Խաչիկյան, Թովմա Մեծոփեցու մատենագրական վաստակը (անտիպ)։

39 Տ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 6։ Ահա այդ նամակներից մեկը, որ բերում ենք կրճատումով, քաղված Թովմա Մեծոփեցու հավաքած նամակների ժողովածուից։ «Նուաստս դրիմ զյիսուսաւանդն ողջոյն և զհաւատացեալսդ սրբոյ երրորդութեանն, ուր և հասանի նամակս աւրհնութեան մերոյ, ի քաղաք, ի դեպուղ, վանք և յանապատ։

Նախ՝ առաջին, աստուածաբան վարդապետաց, առաքելաշնորհ եպիսկոպոսաց, սրբանուէր քահանայից, ուղղափառ սարկաւագաց, քրիստոսասէր իշխանաց, հաւատարիմ տանուտէրաց, քաջամիտ ձեռնաւորաց, իմաստուն վաճառականաց, աշխատասէր հողագործաց, փարթամ և առատամիտ շինականաց, համեստ և ողորմած կանանցդ, մեծամեծաց և փոքունց, երիտասարդաց և կուսանաց, ծերոց և տղայոց, եւ առհասարակ ամենայն ժողովրդոց... աղաւթիւք հայցէմք յամենառատ տէառնէ հեղցէ ի վերա ձեր յինչս յոգի և ի մարմին ձեր, ի տունս և ի բնակութիւն ձեր, յինչս ձեր և ի ստացուածս ձեր, յանդ և ի վաստակս ձեր, յանասունս և ի հօտս ձեր, և զամենայն պատուհաս, որ վասն մեղաց դան ի վերա մեր, դարձուսցէ տէր Աստուած մեր, ամէն։ Այլև ծանիցէ աստուածասիրութիւն ձեր վասն հարկևոր և լաւ ապրած առնդ, որ է դա ստոյգ գիրս տէր և ունի դերի տարած, միջնորդօք և աղաչանաւք կատարած դորա, հիմա դա ոչինչ ճար չունելով, բան զՔրիստոս և զորին հաւատացեալսդ, շրջի լալագին աչաւք և դառն արտասուաւք ի դրունս ողորմածաց, խնդրել ողորմութիւն ի սիրելեացդ աստուծոյ։

Արդ արարէք դմա ողորմութիւն, որ շատ և որ սակաւ։ Ով որ խաչի է խոստացեալ կամ Երուսաղէմայ ճանապարհին, կամ եկեղեցւոյ, տուք լիով ի ձեռն դորա, որ ազատեն այն քրիստոնէին անաւրինացն, զի ողորմութիւնն բարձր առ դատաստանն աստուծոյ...։ Կատարողք աղաչանաց մերոց աւրհնիք յաստուծոյ և յամենայն սրբոց և ի մէնջ, ամէն։ (Վենետիկ, ձեռ. № 1092)։